



Հաստատվել է 2023թ. օգոստոսի 30-ի  
մանկավարժական խորհրդի № 1 նիստում  
մանկխորհի նախագահ՝ (Վ. Ավետիսյան)

**ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»  
ՊՈԱԿ-Ի**

**ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

**2023-2024 ուսումնական տարի**

ք. Մարտունի

2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	2
2. Ընդհանուր կազմակերպչական հարցեր.....	6
3. Աշխատանք մանկավարժական կադրերի հետ.....	8
4.Մանկավարժական խորհրդի գործունեության պլանավորում -----	9
5. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.....	26
6.Ներդրոցական վերահսկողություն.....	29
7. Աշխատանք ծնողների հետ.....	31
8. Ֆինանսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում..	32
9. Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ.....	33

## ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

**2023-20224** ուսումնական տարի

### Ներածություն

Դպրոցի լրիվ անվանումն ըստ կանոնադրության	ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ
Հիմնադիրը	ՀՀ կառավարություն
Դպրոցի հասցեն	ք. Մարտունի Նարեկացի 19
Դպրոցի հեռախոսահամարը	/0262/ 4-23-84
Դպրոցի էլեկտրոնային հասցեն	martuni 2@ schools.am
Որ թվին է հիմնադրվել դպրոցը	1953թ.
Աշակերտների թիվը	216
Քանի հերթով է աշխատում դպրոցը	միահերթ
Քանի օր է աշխատանքային շաբաթը	հինգօրյա

### Դպրոցում իրականացվող ուսումնական ծրագրերը

	ընդհանուր	մասնագիտացված	հատուկ
տարրական հանրակրթական 1-4	<i>0 դասարան</i>		
հիմնական հանրակրթական 5-9	<i>0 դասարան</i>		
միջնակարգ հանրակրթական 10-12	12 <i>դասարան</i> 216 աշակերտ	հոսքային ուսուցմամբ	

**ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՎԱԾ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ, ԴԱՍՂԵԿՆԵՐ**

Հ/Հ	Դասարան	Աշակերտների թիվը	Աղջիկ/տղա	Դասղեկ
1.	X <sup>Ա</sup> հումանիտար	16	10/6	Գալստյան Մարինա
2.	X <sup>Բ</sup> հումանիտար	15	13/2	Ֆիդոյան Անուշ
3.	X <sup>Գ</sup> հումանիտար	16	4/12	Դարբինյան Արմինե
4.	X <sup>Դ</sup> տնտեսագիտական	16	8/8	Մնացականյան Անուշ
5.	X <sup>Ե</sup> ֆիզմաթ	17	9/8	Խաչատրյան Էլմիրա
6.	XI <sup>Ա</sup> հումանիտար	16	10/6	Ավետիսյան Մետաքսյա
7.	XI <sup>Բ</sup> հումանիտար	16	13/3	
8.	XI <sup>Գ</sup> տնտեսագիտական	24	17/7	
9.	XII <sup>Ա</sup> հումանիտար	22	11/10	Կարապետյան Անուշ
10.	XII <sup>Բ</sup> հումանիտար	20	10/10	Սարգսյան Մարինե
11.	XII <sup>Գ</sup> տնտեսագիտական	25	9/15	Ալեքսանյան Սուսաննա
12.	XII <sup>Դ</sup> բն.մաթեմատ.	13	7/6	Ֆիդոյան Աշխեն

**Աշակերտների կոնտինգենտը**

	<i>Անապահով ընտանիքներից</i>	<i>Միակողմանի ծնողազուրկ</i>	<i>Երկկողմանի ծնողազուրկ</i>
1-4	-	-	-
5-9			-
10-12	27	11	-
Երկարորյա	-	-	-

	<i>Աշակերտների թիվը</i>	<i>Անբավարար ունեն</i>	<i>Գտնվում են ավագ դպրոցում</i>	<i>Ընդունվում են ԲՈՒՀ</i>
1-4	-	-	-	-
5-9		-	-	-
10-12	216	-	216	

**2023- 2024 ուսումնական տարում դպրոցում ձևավորված  
առարկայական մեթոդախավորումները**

1. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – ԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
2. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ – ՄԱՐԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ
3. ՕՏԱՐ ԼԵԶՈՒ – ԼՅՈՒԴՄԻԼԱ ՇԱՀՈՒՄՅԱՆ
4. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ – ԷԼՄԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
5. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՆԶՊ – ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
6. ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ – ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ
7. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ, ԱՎՏՈԳՈՐԾ – ՎԱԶԳԵՆ ԲԵԳԼԱՐՅԱՆ

## *ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ*

<b>Դպրոցի շենքը</b>	Կառուցվել է 1964թ.-ին 350 աշակերտի համար: Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2017-2019թթ-ին: Հիմնանորոգումից հետո շենքային հզորությունը չի փոփոխվել: Բաղկացած է երեք հիմնական մասնաշենքերից, առնձին
<b>Վիճակը</b>	Դպրոցի շենքի /Նարեկացի 19/ հիմնանորոգումից հետո շենքային պայմանները կարելի է գնահատել գերազանց:
<b>Դասասենյակների կահույքը</b>	Դպրոցն ունի 12 դասասենյակ, բոլորն էլ կահավորված են անհրաժեշտ ուսումնական գույքով: Դասասենյակներից 7-ը կահավորված է բոլորովին նոր գույքով, մնացած 4-ում թարմացման անհրաժեշտություն կա:
<b>Կաբինետների հագեցվածությունը</b>	2012թ.-ին համալրվել է դպրոցի բնագիտական առարկաների /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն/ լաբորատոր գույքը/ հիմնական դպրոցա ծրագրային պահանջներին համապատասխան/ 2020թ-ին դպրոցը համլրվել է բնագիտական առարկաների /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն/ ժամանակակից լաբորատոր սարքավորումներով: Լաբորատոր և կաբինետային պայմանները ամբողջությամբ հարմարեցված են/ծորակներ, ջրահեռացում, էլեկտրական հոսանքի սեղանային հարմարեցումներ, օդափոխության համակարգ և այլն/ առարկայական փորձերի համար:
<b>Սպորտային դահլիճի վիճակը</b>	Դահլիճը հիմնանորոգված է: Շենքային պայմաններն անթերի են, սպորտային գույքով ապահովված է: Դահլիճն ունի առանձնացված հանդերձարաններ/տղաներ, աղջիկներ/, լոգասենյակներ, սանհանգույցներ, ինչ պես նաև ուսուցչի համար առանձնացված աշխատասենյակ: Դահլիճը ունի օդափոխության համակարգ: Հատակը՝ վինիլային է: Ամրացված են վոլեյբոլի և բասկետբոլի ցանցեր:
<b>Միջոցառումների դահլիճի վիճակը և հագեցվածությունը</b>	Միջոցառումների համար առանձնացված դահլիճը հիմնանորոգված է: Գտնվում է դպրոցի երրորդ հարկում: Մուտքերը՝ դահլիճի աջ և ձախ կողմերից են: Ունի առանձնացված բեմ, աթոռները շարժական են/170 տեղ/: Դահլիճն ունի նաև օդափոխության համակարգ: Հարմարեցված է ցուցադրությունների համար:
<b>Համակարգիչների թիվը և ցանցի նկարագրությունը</b>	Նոր հիմնանորոգված շենքում գործում են երկու համակարգչային կաբինետներ /դրանցից մեկը՝ ռոբոտաշինության խմբակ/: Նյութատեխնիկական հագեցվածության առումով դպրոցն ապահովված է համակարգիչներով: Կաբինետներում տեղադրված են էլեկտրոնային գրատախտակներ: Դպրոցն ունի մոտ 40 համակարգիչ: Համակարգիչներն ունեն թարմացման կարիք:
<b>Գրադարանի վիճակը</b>	Գրադարանը հիմնանորոգված է, ապահովված է գրադարակներով, համակարգչով, ինտերնետ կապով :

# 1 բաժին

## Հիմնական պարտադիր կրթության ապահովում Կազմակերպչական –մանկավարժական միջոցառումներ

<i>Աշխատանքի բովանդակությունը</i>	<i>Կատարող</i>	<i>Կատարման ժամկետ</i>	<i>Ծանոթություն</i>
1.Ցուցակագրել տարածքի հիմնական դպրոցի շրջանավարտներին և կազմել 2023-2024 ուստարվա նախնական կոմպլեկտավորումը:	տնօրեն, ամրացված ուսուցիչներ	օգոստոս	կատարված է
1.Կատարել համայնքի հիմնական դպրոցն ավարտած և ավագ դպրոցում ուսումը շարունակող երեխաների հաշվառում և նրանց ընդգրկում,կոմպլեկտավորում՝ համապատասխան դասարաններում:	տնօրեն, ամրացված ուսուցիչներ, տնօրենի տեղակալ, ԴԱԿ, համակարգչային օպերատոր	օգոստոս	կատարված է
3.Պայմաններ ստեղծել դպրոցում սոցիալապես անապահով և անբարենպաստ ըտանիքների երեխաների համար:Մշակել կարիքով պայմանավորված աջակցություն:	տնօրեն, դասղեկներ	օգոստոս սեպտեմբեր	կատարված է
4.Վերահսկողություն սահմանել պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք:	տնօրեն, տնօրենի տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	ուստարվա ընթացքում	
5.Ուշադրության կենտրոնում պահել դժվար առաջադիմող և երկտարեցի հոգեբանական խնդիրներ ունեցող,, աշակերտներին: Հաճախակի ստուգել նրանց հետ տարվող աշխատանքները:	տնօրենի տեղակալ, ԴԱԿ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում	
6.Պարտադիր ուսուցման իրականացման, սովորողների կողմից պետական կրթական չափորոշիչներով նախատեսված և որակյալ կրթության	տնօրենի տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ, ծնողական խորհուրդ	ուստարվա ընթացքում	

<p>ապահովման նպատակով՝ գործընթացին մասնակից դարձնել սովորողների ծնողներին և ծնողական խորհրդին:</p>			
<p>7.Թույլ առաջադիմող և երկտարեցի աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական խմբակներում, ակումբներում, սեկցիաներում (առկայության դեպքում):</p>	<p>ԴԱԿ, դասղեկներ, խմբավարներ</p>	<p>սեպտեմբեր</p>	
<p>8. Ուսումնական տարվա ընթացքում առնվազն 4 անգամ էլեկտրոնային դասամատյանից դուրս բերել ընթացիկ գնահատականները, բացակայությունները և տեղեկացնել այդ առումով առավել վատթարագույն վիճակում գտնվող սովորողների ծնողներին, նրանց այդ մասին տալ գրավոր ծանուցումներ:</p>	<p>ՈՒԱԳՏ, ՄԿԱԳ, դասղեկներ</p>	<p>Ուստարվա ընթացքում/նոյեմբեր, դեկտեմբեր, մարտ –մայիս/</p>	



## 2 թղթաժին

### Աշխատանք մասնավարժական կադրերի հետ, նրանց որակավորման բարձրացումը

1.Նշանակել դասղեկներ, ստեղծել մասնախմբեր/հաստատել կազմը/ և ընտրել մասնախմբերի ղեկավարներին:	տնօրեն	օգոստոս	կատարված է
2.Անցկացնել մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Նրանց ծանոթացնել մասնախմբերի կանոնադրությանը, քննարկել,որոշել հետագա անելիքները:	տնօրեն, տնօրենի տեղակալ, ուսուցիչներ	սեպտեմբեր	կատարված է
3. Դասղեկների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դպրոցում կազմակերպել 10 - 12-րդ դասարանների դասղեկների միավորում:	Մովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	սեպտեմբեր	կատարված է
4. Պլանավորել մասնախմբերի գործունեությունը:Հաստատել մասնախմբերի աշխատանքային պլանները:Մահմանված ժամկետներում տեղադրել համապատասխան կայքէջում:	տնօրենի տեղակալ, մասնախմբերի ղեկավարներ	օգոստոս– սեպտեմբեր	կատարված է
5. Ուսումնասիրել առաջավոր ուսուցիչների աշխատանքի փորձը և տարածել դպրոցում:	տնօրեն, տնօրենի տեղակալ, ԴԱԿ, մ/մ ղեկավարներ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում	
6.Ուսուցիչներին ընդգրկել վերապատրաստման, վերավորակավորման և ատեստավորման նախապատրաստման դասընթացներում/ըստ պահանջի/:	մասնախմբերի ղեկավարներ, տնօրեն, տնօրենի տեղակալ	ուստարվա ընթացքում	
7. ,Մահմանել դասալսումների հաճախականությունը/տնօրեն և փոխտնօրենների համար	տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբերի ղեկավարներ, ուսուցիչներ	ուստարվա ընթացքում	

շաբաթական 3–4 ժամ/ Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ մանկավարժներին: Հատուկ ուշադրություններ դարձնել սկսնակ ուսուցիչներին:			
8. Կազմակերպել սկսնակ ուսուցիչների ստաժավորման գործը, նրանց կցել որակյալ ուսուցիչների:	Աղեկյան Հայարփի, տնօրենի ուս. աշխ. գծով տեղակալ՝ Տ. Կարապետյան	1-ին և 2-րդ կիսամյակներ	
9. Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինար կոնսուլտացիաներ: Այդ նպատակով հրավիրել համապատասխան մասնագետներ նաև այլ հաստատություններից ու կառույցներից	տնօրեն, տնօրենի տեղակալ, ԴԱԿ, ԿԶՆԱԿ–ից մասնագետներ, վերապատրաստ ող ուսուցիչներ	ուստարվա ընթացքում	
10. Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին: Այս թեմայով յուրաքանչյուր մեթոդախավորման համար տարեկան 2 զեկույց:	տնօրեն, տնօրենի տեղակալ, ԴԱԿ, մասնախմբերի ղեկավարներ	ուստարվա ընթացքում	
11. Ուսուցիչներին պարբերաբար ծանոթացնել ՀՀ Կառավարության որոշումներին, կրթության և գիտության նախարարության հրահանգներին, հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	տնօրեն, տնօրենի տեղակալ, ԴԱԿ	ուստարվա ընթացքում	

## Մանկավարժական խորհրդի գործունեությունը

Մանկավարժական խորհուրդը (այսուհետ՝ Մանկխորհուրդ) ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին է: Մանկավարժական խորհուրդը (այսուհետ՝ Մանկխորհուրդը) ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Կրթության մասին, Հանրակրթության մասին, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով:

### **1. Մանկավարժական խորհրդի գործառույթներն են.**

Մանկխորհուրդը քննարկում է՝

1) հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան.

1.1) դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը.

2) սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի համաձայնության առկայության դեպքում.

3) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

4) ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը.

5) հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր.

6) դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայությունների մատուցման հարցը.

7) ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

*(79-րդ կետը փոփ. 11.02.2021 թիվ 166-Ն որոշում)*

### **2. Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում՝**

1) դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու,

1.1) քվեարկության միջոցով, դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդին հավանություն տալու,

2) դպրոցի ավագ դասարանի հոսքերի ձևավորման,

3) սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու,

4) ավագ դպրոցի փոխադրական դասարաններում տարեվերջյան քննություններ սահմանելու,

5) սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու,

6) որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու,

7) բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի,

8) սովորողների վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու,

9) դպրոցի շրջանավարտներին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու,

10) օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու,

11) դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացնում է տնօրենին՝ հաստատման.

12) դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին:

*(80-րդ կետը փոփ. 11.02.2021 թիվ 166-Ն որոշում)*

### **3. Մանկավարժական խորհուրդն իրականացնում է՝**

1) հանրակրթական դպրոցում պետական քաղաքականության հարցեր,

2) կրթության նորարարական նվաճումների ներդրում մանկավարժական անձնակազմի պրակտիկայում,

3) մանկավարժական առաջավոր փորձի ներդրում

4) ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը.

5) հանրակրթական դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայություններ մատուցելու հարցերը.

6) սովորողների ընդունելության, տեղափոխման, փոխադրման և ազատման վերաբերյալ հարցերը:

#### **4. Մանկավարժական խորհրդի աշխատանքի կազմակերպում**

1) Մանկխորհրդի աշխատանքը կազմակերպում է ուսումնական հաստատության տնօրենը , որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է.

2) Մանկխորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները (տնօրեն, ուսումնական և ՄԿԱ գծով տնօրենի տեղակալներ , առարկայական մեթոդական միավորումների նախագահներ, դասղեկներ, այլ մանկավարժական աշխատողներ, ծնողական խորհրդի նախագահ, արհմիության նախագահն): Մանկխորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում: Մանկավարժական խորհուրդը առաջնորդվում է ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքային տարեկան պլանով:

#### **5. Մանկավարժական խորհուրդը .**

1) Մանկխորհուրդը հավանություն է տալիս ուսումնական հաստատության զարգացման տարեկան ծրագրին,

2) Մանկխորհուրդը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին հավանություն է տալիս ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային պլանին,

3) Մանկխորհուրդը հավանություն է տալիս դպրոցի ներքին կարգապահական կանոններին,

5) Մանկխորհուրդը քննարկում է արտաքին գնահատման արդյունքները և ներկայացնում իր կարծիքը . արտաքին գնահատման արդյունքների վերաբերյալ իր եզրակացությունն է տալիս,

6) Ուսումնական տարվա ավարտին մանկավարժական խորհուրդը գնահատում է ուսումնական հաստատության գործունեության տարեկան արդյունքները և առաջարկներ է ներկայացնում դպրոցի ղեկավարությանը կրթական աշխատանքների որակի բարելավման նպատակով,

7) Մանկխորհուրդը նախարարության սահմանած կարգով՝ իր կազմից գաղտնի քվեարկությամբ ընտրում է հաստատության կառավարման խորհրդի անդամների: Ընտրված են համարվում երկու առավել ձայն հավաքած ներկայացուցիչները,

#### **6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) սովորողների ուսուցման կազմակերպումը.**

1) Մանկխորհուրդը տեղեկացվում է ՏՄԱԿ –ի կողմից սահմանված կարգով գնահատված ԿԱՊԿՈՒ սովորողների անվանական կազմի և նրանց խանգարումների ծանրության աստիճանի վերաբերյալ,

2) Մանկխորհուրդը որոշում է կայացնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանի կազման և դրա տևողության վերաբերյալ,

3) Մանկխորհուրդը որոշում է՝ լիազոր մարմնի սահմանած կարգի համաձայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ցուցաբերել հատուկ մանկավարժահոգեբանական աջակցություն՝ ուսումնական հաստատություններում հաստիքագրված բազմամասնագիտական խմբի և (կամ) աջակցման կենտրոնների հատուկ մանկավարժական ծառայություններ կազմակերպելու միջոցով,

4) Մանկխորհուրդը քննարկում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի համաձայնության առկայության դեպքում.

5) Տնօրենի ուսումնական գծով տեղակալը մանկավարժական խորհրդին է ներկայացնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի անհատական ուսուցման պլանը, նրանում նշված ընթացիկ, կիսամյակային և տարեկան ամփոփիչ արդյունքները,

**7. Ավարտական, պետական ավարտական քննությունների աշխատանքների հետ կապված հարցեր.**

1) Մանկխորհուրդը որոշում է կայացնում 4-րդ դասարանի սովորողներին գիտելիքների ստուգման, 9-րդ դասարանի սովորողներին ավարտական և 12-րդ դասարանի սովորողներին պետական ավարտական քննություններին թույլատրելու հարցի վերաբերյալ,

2) Մանկխորհուրդը որոշում է կայացնում դպրոցի շրջանավարտներին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու վերաբերյալ

3) Մանկխորհուրդը որոշում է կայացնում սովորողին գերազանցության մեդալով պարգևատրելու հարցի վերաբերյալ:

**8. Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները, սովորողներին խրախուսման, նրանց նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցը.**

1) Մանկխորհուրդը որոշում է կայացնում սահմանված կարգին համապատասխան՝ հանրակրթական դպրոցում կարգապահությունը կազմակերպել օրենքով, կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

2) Մանկխորհուրդը որոշում է կայացնում սահմանած կարգին համապատասխան միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կիրառել ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում օրենքով և կանոնադրությամբ սահմանած հետևյալ կարգապահական տույժեր՝

1. նկատողություն

2. խիստ նկատողություն

3) Մանկխորհուրդը որոշում է կայացնում սահմանված կարգին համապատասխան սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական տույժը հանելու վերաբերյալ, եթե սովորողը նոր կարգապահական խախտում թույլ չի տվել և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող, իսկ հակառակ դեպքում ուսումնական հաստատությունը կարող է դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմնին՝ սովորողի համար սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու համար:

4) Սովորողների համար ուսումնական հաստատության, նրա հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

**9. Մանկավարժական խորհրդի առաջին նիստը գումարվում է**

- 1) Մանկխորհրդի առաջին նիստը գումարվում է օգոստոսին,
- 2) Մանկխորհրդի նիստը հրավիրում է ուսումնական հաստատության տնօրենը:

**10. Մանկավարժական խորհրդի ուսումնական տարվա ընթացքում հրավիրված նիստերի օրակարգը**

Օրակարգը պարունակում է հարցերի ցանկ, որոնք քննարկվում են մանկխորհրդի նիստում: Օրակարգում անդրադառնում են մանկավարժական խորհրդի նախորդ նիստում չքննարկված թեմաներին, ինչպես նաև նոր օրակարգային հարցերին : Օրակարգը հաստատվում է նիստի սկզբում: Նախքան հաստատելը մանկավարժական խորհուրդը կարող է իր որոշումով փոփոխություններ կատարել օրակարգում: Մանկավարժական խորհուրդը չի կարող փոփոխել կամ օրակարգից հանել հարցեր, որոնք նա պետք է քննարկի հանրակրթությունը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Մանկխորհրդի նիստը վարում է հաստատության տնօրենը, որն ի պաշտոն է մանկավարժական խորհրդի նախագահն է:

**1–ին նիստ /օգոստոսի 18–20/**

Օրակարգում	Զեկուցող/իրականացնողներ	Ժամկետ	Կատարման մասին նշումներ
1.Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)	/զեկուցող՝ տնօրեն Վ. Ավետիսյան/, մանկավարժական խորհուրդ		
2. 2023-2024 ուսումնական տարվա հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կազմի հաստատում և մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրություն (զեկուցող՝ տնօրեն)	(զեկուցող՝ տնօրեն /Վ. Ավետիսյան), աշխատակազմ, մանկավարժական խորհուրդ		
3.Օգոստոսի 20-30-ի վերաքննությունների (լրացուցիչ քննությունների) հանձնաժողովների և ժամանակացույցի հաստատում	զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ		
4.2023-2024 ուսումնական տարվա դասաբաշխման և դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հաստատում (զեկուցող՝ տնօրեն)	զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ		
5.Դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում	զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ		
6.2023–2024 ուստարվա Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հաստատում	զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/		
7.Դասագրքերի բաշխման ընթացքի մասին	(զեկուցող՝ տնօրեն, գրադարանավար)		
8.Ուսումնական հաստատության աշխատանքային շաբաթվա տևողության և աշխատանքային ռեժիմի հաստատում	զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ,մ/խ		
<a href="#">9.Հաստատության ներքին գնահատման</a> հաշվետվության քննարկում	զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/		

**2–րդ նիստ/օգոստոսի 30–31/**

<p>1. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)</p>	<p>Զեկուցող՝ տնօրեն, մանկ. խորհուրդ</p>	<p>30.08.2023թ.</p>	
<p>2. Անցյալ ուսումնական տարվա արդյունքները և նոր ուսումնական տարվա խնդիրները/զեկուցում/:</p>	<p>Տնօրեն, տնօրենի տեղակալ</p>	<p>30.08.2023թ.</p>	
<p>3. Մեթոդական միավորումների կազմավորում՝ ըստ ուսումնական բնագավառների և նախարարության կողմից հաստատված ուսումնական հաստատության ֆինանսավորման կարգի:</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ</p>	<p>30.08.2023թ.</p>	
<p>4. Հեռավար՝ մենթորական դասաժամերի դասաբաշխում՝ ըստ ԿՏԱԿԻ ներկայացրած դասաժամերի</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ</p>	<p>30.08.2023թ</p>	
<p>7. ԱԲ խորացված մաթեմատիկայով փորձարարական դասարանի ուսումնական պլանի հաստատում</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ</p>	<p>30.08.2023թ</p>	
<p>8. Վերաքննությունների արդյունքների հաստատում, սովորողների փոխադրման մասին որոշման ընդունում:</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ</p>		
<p>9. Տարեկան ուսումնադաստիարակչական միջոցառումների հաստատում</p>	<p>զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի, ՄԿԱ գծով տեղակալներ, ԴԱԿ</p>		



### 3-րդ նիստ /հոկտեմբերի 26–ից 30–ը/

1. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն):	զեկուցող՝ տնօրեն՝ Վ. Ավետիսյան/		
2. Սովորողների գիտելիքների, կարողությունների որակը 10-12-րդ դասարաններում /ուսումնասիրությունների արդյունքների քննարկումը/:	Ջեկուցող՝ տնօրեն, տնօրենի տեղակալ, ԴԱԿ, մասնախմբերի ղեկավարներ, մ/խ		
3. ՀՀ N հանրակրթական դպրոց ՊՈԱԿ-ի 2022 թ. <a href="#">բյուջեի նախագծի</a> մասին	զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/		
4. Առարկայական օլիմպիադայի ներդրողական փուլի աշխատանքների նախապատրաստում, հետաքրքրված սովորողների նախապատրաստում	Ջեկուցող՝ տնօրեն, տնօրենի տեղակալ, ԴԱԿ, մասնախմբերի ղեկավարներ		
5. Դասագրքերի բաշխման, վարձավճարների զեղչման, զեղչից օգտվող աշակերտների անվանացանկի հաստատում	Ջեկուցող՝ տնօրեն, տնօրենի տեղակալ, գրադարանավար, դասղեկներ		
6. Էլեկտրոնային դասամատյանների գրանցումների, դրանց հետ կապված թերացումների, ընթացիկ հարցերի քննարկում	Ջեկուցող՝ Տնօրենի տեղակալ, դասավանդող ուսուցիչներ, մ/մ ղեկավարներ		
7. Մնացորդային գիտելիքի ստուգման արդյունքների քննարկում/10–րդ դասարանների համար/	Ջեկուցող՝ Տնօրենի տեղակալ, դասավանդող ուսուցիչներ, մ/մ ղեկավարներ		
Բնագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) դասավանդման որակի բարձրացման խնդիրները ընթացիկ ուսումնական տարում հարցի քննարկում (ըստ ուսումնական հաստատության առանձնահատկությունների ու կարիքների)	զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ուսուցիչներ		
8. Ցածր առաջադիմություն և բացակայությունների բարձր ցուցանիշ ունեցող սովորողների ծնողներին գրավոր ծանուցումներ տալու մասին	Ջեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի, ՄԿԱ գծով տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ		
8. Այլ հարցեր			

## 4–րդ նիստ/դեկտեմբերի 27–ից 29–ը/

<p>1. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն):</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/</p>		
<p>2.2023–24 ուս տարվա 1-ին կիսամյակում կատարված, ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկում</p>	<p>զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի, ՄԿԱ գծով տեղակալներ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ ղեկավարներ</p>		
<p>3. Քննարկել սովորողների գիտելիքների որակը հայոց և ռուսաց լեզուներից և մաթեմատիկայից 10-12-րդ դասարաններում համադարոցական գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծության հիման վրա:</p>	<p>զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, դասավանդող ուսուցիչներ, մ/մ ղեկավարներ</p>		
<p>4. Կարգապահական, կազմակերպչական հարցեր</p>	<p>զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ, մ/մ ղեկավարներ</p>		
<p>5. Դեկտեմբերին անցկացրող առարկայական օլիմպիադանների և տնօրինության կողմից հանձնարարվող ներդարոցական ստուգողական գրավոր աշխատանքների իրականացում/կազմակերպչական հարցեր, առաջադրանքներ մ/մ ղեկավարներին/</p>	<p>զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, դասավանդող ուսուցիչներ, մ/մ ղեկավարներ</p>		
<p>Այլ հարցեր</p>			

## 5-րդ նիստ /հունվարի 7–10–ը/

<p>1. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն):</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/</p>		
<p>2. 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների և սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)</p>	<p>(զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ), Տ. Կարապետյան</p>		
<p>3. Ուսումնադաստիարակչական աշխատանքների 1-ին կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ</p>		
<p>4. Ուսումնական հաստատության 12-րդ դասարանի սովորողներին դեկտեմբերին կամ հունվարին անցկացվող պետական ավարտական քննություններին մասնակցությունը թույլ տալու հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրեն)</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/</p>		
<p>5. Պետական ավարտական քննություններ հանձնած 12-րդ դասարանի սովորողների՝ քննական առարկաներից ուսումնական առաջադիմության արդյունքների ամփոփում/եթե հանձնել են դեկտեմբերին/</p>	<p>զեկուցող՝ տնօրեն/Վ. Ավետիսյան/, տնօրենի տեղակալ/Տ. Կարապետյան/, մ/խ</p>		
<p>6. Տնօրենի տեղակալների, մեթոդական միավորումների, դասղեկների, ուսուցչի օգնականների, հաստիքային մյուս աշխատակիցների աշխատանքների արդյունավետության քննարկում, կիսամյակի ամփոփի ներկայացում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի</p>	<p>զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով, ՄԿԱ գծով տեղակալներ</p>		

գծով, ՄԿԱ գծով տեղակալներ )			
7. 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դպրոցի ուսումնական պլանի քննարկում և դասաբաշխման հաստատում (զեկուցող՝ տնօրեն )	զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մ/խ		
8. Ներդպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում և հաջորդ փուլի նախապատրաստում: Տարածքային փուլ անցած աշակերտների անվանացանկի հաստատում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ):	զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով, տեղակալ, դասավանդող ուսուցիչներ		
9. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակին սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում, հաստատությունից սովորողի տեղափոխման ազատման և ընդգրկման (աշակերտների շարժի) հարցի ներկայացում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)	զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով, ՄԿԱ գծով տեղակալներ, դասղեկներ		
10. 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում նույն դասարանից տարբեր առարկայական խմբերի կազմում և հաստատում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)	զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ		
11. Լսել տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքերի կազմակերպչի հաղորդումը առաջին կիսամյակում կատարված արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների, միջոցառումների մասին:	Չեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ		
12. Այլ հարցեր			

## 6-րդ նիստ /փետրվար 1–5/

